ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ապրիլի 2013թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N546-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոց», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունները /համաձայն NN 1-5 հավելվածների/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպությունները հանդիսացել են Երևան քաղաքի Նոր Նորք թաղային համայնքի ոչ առևտրային կազմակերպություններ:

Երևան համայնքի կազմավորման արդյունքում Երևանի թաղային համայնքները հանդիսանում են Երևան համայնքի իրավանախորդները, այդ թվում նաև Նոր Նորք թաղային համայնքը, ինչը ամրագրված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածով:

ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N546-Ա որոշմամբ անվանափոխվել են մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ:

Ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է վերը նշված հանգամանքներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N1

Երևան քաղաքի ավագանու

2013 թվականի ապրիլի 5-ի

N----- Ա որոշման

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2013թ. N-----Ա ՈՐՈՇՄԱՄԲ

Կազմված է «-----» ---------- 2013թ.

և բաղկացած է 6 էջից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

_____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 01.03.2010թ.

Գրանցման թիվ 28221006677

Վկայական 03-Ա 087577 ՀՎՀՀ 00801876

01.03.2010թ. գրանցված կանոնադրության

թիվ փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

«-----» ---------- 2013թ.

տարածքային բաժին _____

«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը հաստատելու մասին» հ.604 - Ն որոշմամբ «Երևանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմավորման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը, գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Խորհրդային տարածքայինՍտորաբաժանման կողմից, գրանցման թիվ 28221006677, վկայական 03Ա087577, 10.03.2010թ.: Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Երևանի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «Երևանի Նոր նորք վարչական շրջանի Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը,

Ռուսերեն լրիվ՝ «Школа искусств имени А.Даниелян административного округа Нор Норк г. Еревана» общинная некоммерческая организация,

Անգլերեն լրիվ՝ «Art school named after H.Danielyan administrative district Nor Norq of Yerevan» community non commercial organization:

1.11 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն,

Քաղաք Երևան, Նոր-Նորքի 2-րդ զանգված, Գայի պող. 17:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային և նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու համար: Կազմակերպությունն ուսումնական հաստատության տիպի արվեստի դպրոց է:

2.2 Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

ա) երաժշտական մասնագիտական կրթության իրականացում,

բ) արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,

գ) ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, օժտված և տաղանդավոր երեխաներին համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար նախապատրաստում,

դ) մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,

ե) բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում,

2.3 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համերգային գործունեություն

բ) հրատարակչական գործունեություն:

Ձեռնակատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպությունը իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպությունը հարկերը տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.5 Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը

3.3 Լիազորված համայնքային մարմինը (Երևանի քաղաքապետ)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Երևանի քաղաքապետը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գոործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ,իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Երևանի քաղաքապետը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Երևանի քաղաքապետը:

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսական միջոցներ ու նշանակում կարգապահական տուժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմնին,

ժ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3.6 Կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ:

IV ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:

4.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում աշակերտների ուսման վարձից գոյացած գումարները, ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները և հանգանակությունները, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհները:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.11 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվուն է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2013թ. N-----Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2
Երևան քաղաքի ավագանու
2013 թվականի ապրիլի 5-ի
N----Ա որոշման

Կազմված է «---» ---------- 2013թ.
և բաղկացած է «8» էջից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 08.04.2005Թ.
Գրանցման թիվ 28221005229
Վկայական 03Ա-068406; ՀՎՀՀ 00801884
08.04.2005թ. գրանցման կանոնադրության թիվ փոփոխությունը գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

«---» ---------- 2013թ.

տարածքային բաժին ----------

«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող կազմակերպություն է և հանդիսանում է «Նոր Նորքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը, վերջինս իրավահաջորդն է Երևան քաղաքի թիվ 15 մշակույթի տուն հիմնարկի (282.210.05229):

1.2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Երևանի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ Հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6.Կազմակերպության անվանումը

Հայերեն լրիվ՝ «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

Ռուսերեն լրիվ՝ «Центр культуры административного округа Нор Норк г. Еревана» общинная некоммерческая организация

Անգլերեն լրիվ՝ <<Cultural center administrative district Nor Norq of Yerevan>> community non commercial organization.

1.7.Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.8.Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից արող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.9.Կազմակերպությունը Հյաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական, մշակութային, հասարակական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.10. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, քաղաք Երևան, Գայի պող. 19

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1.Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց մշակութային հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացումը, կիրառական գիտելիքների ձևավորումը:

2.2. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համակարգչային ուսուցման իրականացում

բ) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում

գ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում

դ) ճամբարների կազմակերպում

ե) հրաձգարանների գործունեություն, սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն

զ) ներկայացումների, համերգների կազմակերպում,կրթական գործունեության այլ տեսակներ:

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար (ոչ առևտրային կազմակերպությունը) իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.3.Կազմակերպությունն ապահովում է բնակիչների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, երեխաների առողջության պահպանումը, վարքի շեղումների կանխարգելումը:

2.4.Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.5. Կազմակերպության հիմնական խնդիրներն են.

ա) երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները,

բ) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

գ) բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը, գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, կարողությունների ու հմտությունների զարգացումը:

դ) պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը,

ե) ներկայացումների, համերգների, փառատոնների, ցուցահանդեսների, ցուցահանդես-վաճառքների կազմակերպումը և կրթական գործունեության այլ տեսակների կազմակերպումը:

Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության տարբեր տեսակներով, իսկ լիցենզավորման ենթակա գործառության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Կազմակերպությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլաններին, ուսումնական ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան

3.2. Կազմակերպությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով բնակչության հետաքրքրություններն ու հակումները, վարչական շրջանի և կրթական համակարգի պահանջները:

3.3.Սաներն ընդգրկվում են Կազմակերպության նույն կամ տարբեր տարիք միավորումներում (խմբակ, ստուդիա, ակումբ, դասարան և այլն): Յուրաքանչյուր սան միաժամանակ իրավունք ունի ընդգրկվելու տարբեր միավորումներում:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1.Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, դրա լիազորած մարմինը, Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

4.2. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.3.Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանում

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը

զ)Կազմակերպության կառավարան համակարգի սահմանումը

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը

4.4.Լիազորված համայնքային մարմինը (Երևանի քաղաքապետ)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման կատարման համար:

4.5.Կազմակերպության տնօրենն իրականացնում է Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորության սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Երևանի քաղաքապետը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
բ) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը,
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,
ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշիվը,
թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ

Կազմակերպության գործադիր մարմինը՝

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Երևանի քաղաքապետը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Երևանի քաղաքապետը:
գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
ե) Տնօրենի պաշտոնունում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:
զ) Կազմակերպության գործադիր մարմն պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության:

Կազմակերպության տնօրենը.

ա) առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ

բ) նախագահում է Կազմակերպության մանկավարժական խորհրդի նիստերը

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի և լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները

դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր

ե) աշխատանքի է նշանակում ու ազատում է աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր

զ) բանկերում բացում հավարկային հաշիվներ, կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների մի բանկերում բացում հավարկային հաշիվներ

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև

ը)սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառացվածքային ստորաբաժանումների իրավասություններ

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի ընտրություն, անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի համար

ժա) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը

ժգ) կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մյուս մարմնի հաստատմանը

ժդ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ

4.7. Տնօրենի բացակայության դեպքում գրավոր կարգադրության (հրամանի) համաձայն նրա լիազորություններն իրականացնում է փոխտնօրենը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

5.1. Կազմակերպության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները սաներն են, նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները, խմբակների ղեկավարները:

5.2. Երեխաների ընդունելության ժամանակ Կազմակերպության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կազմակերպության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի հետ, որոնք կանոնակարգում են մանկապատանեկան կազմակերպության գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով և կազմակերպության ներքին կարգապահական կանոններով

5.3.Սաների ծնողների (օրինական ներկայացուցիչների) իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով

5.4. Կազմակերպության մանկավարժն իրավունք ունի համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ

5.5. Կազմակերպության մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
5.6. Կազմակերպության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:
5.7. Կազմակերպությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:
5.8. Սանը պարտավոր է՝
ա)խնամքով վերաբերվել Կազմակերպության գույքին
բ)հարգել Կազմակերպության սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը
գ)պահպանել Կազմակերպության ներքին կարգապահական կանոնները

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
6.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան, իր հայցողությամբ տնօրինել, տիրապետել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը
6.3. Հիմնադիրը սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ, բացառությամբ Կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի
6.4. Կազմակերպության սեփականության պահպանման համար պատասխանատվությունը կրում է Կազմակերպությունը
6.5. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով
6.6. Հիմնադիրն իրավունք ունի ետ վերցնելու Կազմակերպությանն ամրացված գույքը Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են
6.7. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է ֆինանսական միջոցները
6.8. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում պետական և Երևանի բյուջեներից հատկացումները, ինչպես նաև ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և

արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կողմից մշակութային գործունեությանը տրամադրած դրամաշնորհներից:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

6.9. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են՝

ա) Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանված կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները: Վճարովի դասընթացների վարձավճարի չափը կորոշվի կազմակերպության խորհրդի կողմից: Խորհրդի անդամների մեջ կընդգրկվեն նաև այդ խմբերի ծնողական խորհրդի նախագահն և անդամներ:

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների և քաղաքացիների նվիրատվությունները

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրության խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները

6.10. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից

6.11. Կազմակերպության շահույթը նպատակաուղղվում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը և նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական պայմանների բարելավմանը

6.12. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

7.2. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով

8.2. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:

Հավելված 3

Երևանք քաղաքի ավագանու

2013 թվականի ապրիլի 5-ի

N------Ա որոշման

Կազմված է «-----» ---------- 2013թ.

և բաղկացած է «6» էջից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2013թ.

N----- Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 20.08.1997թ.

Գրանցման թիվ 282.0152

Վկայական 03Ա067916; ՀՎՀՀ 00829881

20.08.1997թ. գրանցված կանոնադրության

թիվ փոփոխությունը գրանցված է

ՀՀ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

«-----» ---------- 2013թ.

Տարածքային բաժին----------

«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Երևանի Նոր Նորք վարչական շրջանի կենտրոնական գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, ոչ առևտրային կազմակերպություն է և հանդիսանում է <<Երևանի Նոր Նորք համայնքի կենտրոնական գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության /վկայական **N282.0152,** տրված պետական ռեգիստրի կողմից **20.08.1997թ**., ներդիր **003,N03Ա067916** վկայական/ իրավահաջորդը:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>>, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, << Մշակութային օրենսդրության հիմունքների մասին >>, << Գրադարանների և գրադարանային գործի մասին>> ՀՀ օրենքներով այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է /այսուհետ՝ Համայնք/ ի դեմս Երևանի ավագանու /այսուհետ՝ Հիմնադիր/, իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը:

1.4 Կազմակերպություն որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8 Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկյա մշակութային հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Կազմակերպությունում չի թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.10 Կազմակերպության անվանումն է՝ -
հայերեն լրիվ՝ << Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Կենտրոնական գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,
- ռուսերեն՝ լրիվ **<< Центральная библиотека административного округа Нор Норк г. Еревана>> общинная некоммерческая организация**
- անգլերեն լրիվ՝ <<**Central library administartive district Nor Norq of Yerevan>> community non commercial organization**

1.11 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայստանի հանրապետություն,քաղաք Երևան, Նոր Նորք վարչական շրջան, 1-ին զանգված, Նանսենի 20 շենք:

2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության գործունեության առարկան և հիմնական նպատակներն են՝

ա/ մշակութային գործունեության իրականացում,

բ/ բնակչության գրադարանային- տեղեկատվական սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի գործունեության օժանդակում,

գ/ Գրքերի և տպագիր նյութերի գրադարանային ֆոնդը կազմող այլ նյութերի արդյունավետ օգտագործում,

դ/ Քաղաքականության , հայ համաշխարհային գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում և լուսաբանում, բնակչության քաղաքական, բարոյական, գեղագիտական դաստիարակություն, ազգային ինքնագիտակցության ու հայրենասիրության ձևավորում մասնագիտական որակի զարգացում գրադարանային մատենագիտական գիտելիքների ուսուցում ու տարածում, բնակչության ազատ ժամանակի կազմակերպում
ե/ գրադարանային նոր ձևերի ու մեթոդների մշակում, դրանց արմատավորում և տարածում, գրադարանային ֆոնդերի համալրման և հարստացման , հաշվառման, մշակման, բաշխման, սպասարկման, գիտատեխնիկական համակարգի և գիտամեթոդական աշխատանքների կազմակերպում,
զ/ գրադարանային ֆոնդի պաշտպանվածության և անվտանգության ապահովում,
է/ գրադարանայնի ֆոնդի համալրում, գնումների, նվիրատվությունների և այլ միջոցներով,
ը/ ազգային և արտասահմանյան պետությունների մշակութային, գիտական հարստությունների, միջազգային հասարակական,բարեգործական կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն
2.2 Կազմակերպությունը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները
ա/ համակարգչային ուսուցման իրականացում
բ/ հասարակական սննդի կազմակերպում
2.3Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը:
Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:
3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա/ Կազմակերպության հիմնադրումը,
բ/ Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների,այդ թվում՝ նրա կողմից իրականցվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
գ/ Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
դ/ Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

ե/Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
զ/Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
է/Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
3.3 Լիազորված համայնքային մարմինը (Երևանի քաղաքապետ) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում չկատարման ոչ պատշաճ կատարման համար:
Երևանի Քաղաքապետը

ա/ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
բ/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

գ/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ ՀՀ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, կարգադրություններն ու ցուցումները,
դ/ լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,
ե/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
զ/ վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
է/ հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունը և տարեկան հաշվեկշիռը
ը/ իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,
թ/ հաստատում է Կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը:
ժ/իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ
3.4 Կազմակերպության գործադիր մարմինը
ա/ կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականցնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Երևանի քաղաքապետը: Կազմակերպության տնօրենն օրնքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների , իրավական այլ ակտերի հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների սույն կանոնադրության և կնքված պայմանգրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
բ/ տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Երևանի քաղաքապետը
գ/Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:
դ/ Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատնքից:

ե/ տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար
զ/ Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարնի օրենդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության

3.5 Տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,
բ/ ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի և լիազորված մարմնի որոշումներով ու սույն կանոնադ-ությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,
գ/ տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ/ աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ,
ե/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ

զ/ կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

է/ սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
ը/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմանում, արձակում հրամաններ, հրահանգեր, տալիս պարտադիր կատարման համար ցուցումների վերահսկում դրանց կատարումը,
թ/ իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմանների ստեղծում նրանց մասնագիտական որակի բարձրացման համար,
թա/ վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
թբ/ ապահովում ներքին աշխատանքային կարգապահության, աշխատանքի պաշտպանության անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը,
թգ/ կազմում է Կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադիրի հաստատմանը,
թդ/ իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
3.6 Տնօրենի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի որոշման /հրամանի/ համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է Կազմակերպությունում աշխատող այլ անձ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում օրենքով չարգելված եղանակներով ձեռք բերված գույքից:
4.2 Կազմակերպության իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
4.3 Կազմակերպության սեփականության պահպանության հոգսը կրում է Կազմակերպությունը
4.4Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում:
4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:
4.6 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու , անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ:
Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանել մեկ տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
4.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոխելու համար;

4.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում ՀՀ պետական և Երևանի բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհներից:
Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:
4.10 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմիզ լիազորված համայնքային մարմինը:
4.11 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսակլան հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի/վերստուգման/ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ ՀՀ կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար
5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպության վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.2Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:
6.3Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Հավելված 4
Երևան քաղաքի ավագանու
2013 թվականի ապրիլի 5-ի
N---Ա որոշման

Կազմված է «---» ---------- 2013թ.
և բաղկացած է 8 էջից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2013թ. N-----Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

_____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 08.07.2003Թ.
Գրանցման թիվ 282.210.04746
Վկայական 03Ա-060496; ՀՎՀՀ 00822823
08.07.2003թ. գրանցված կանոնադրության
թիվ փոփոխությունը գրանցված է
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

«----»---------- 2013թ.

տարածքային բաժին _____

«ՀՀ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»
«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. <<ՀՀ համանքային արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն>> <<Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող, ոչ առևտրային կազմակերպություն է, որը <<ՀՀ համայնքային արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն>> <<Նոր Նորքի ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է:

1.2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Երևանի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը, որի ենթակայությանն է հանձնվում Կազմակերպությունը:

1.4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմանարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական

գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՀՀ համայնքային արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» «ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ:

Ռուսերեն լրիվ՝ “ОБЩИННАЯ ВНЕШКОЛЬНАЯ УЧЕБНОВОСПИТАТЕЛЬНАЯ ОРГАНИЗАЦИЯ РА” "УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ, НАУЧНО-ПРОИЗВОДСТВЕННЫЙ ЦЕНТР АДМИНИСТРАТИВНОГО ОКРУГА НОР НОРК Г. ЕРЕВАНА” ОБЩИННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

Անգլերեն լրիվ՝ “THE COMMUNITY SCHOOL EXTRACURRICULAR EDUCATIONAL INSTITUTE OF RA” "EDUCATIONAL - METHODICAL, RESEARCH-PRODUCTION CENTER ADMINISTRATIVE DISTRICT NOR NORK OF YEREVAN" COMMUNITY NON COMMERCIAL ORGANIZATION

1.11 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ 370090, ՀՀ, ք,Երևան, Նորքի 6-րդ զանգված, Լյուքսենբուրգի 2-րդ նրբ:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության գործունեության հիմնական առարկան և նպատակներն են՝

ա) արտադպրոցական մշակութային ուսուցման ու դաստիարակության իրականացում,

բ) սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորում,

գ) դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացում, երեխաների առողջության պահպանում ու ամրապնդում,

դ) դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդում և խորացում, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդում, նրանց կարողությունների, հմտությունների և ձեռներեցության զարգացում,

ե) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորում.

2.2 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համակարգչային ուսուցման իրականացում,

բ) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում,

գ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,

դ) ճամբարների կազմակերպում,

ե) հրաձգարանների գործունեություն, սպորտային միջոցառումների կազմակերպման և

աջակցման գործունեություն,

գ) ներկայացումների, համերգների կազմակերպում, կրթական գործունեության այլ տեսակներ:

Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար (ոչ առևտրային կազմակերպությունը) իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.3 Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումներր վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.4 Համայնքային կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, նրա լիազոր համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք գործեն բարեխղճորեն և ողջամիտ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2 Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը;

դ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:

3.3 Լիազորված համայնքային մարմինը (Երեանի քաղաքապետ) իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը ե պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Երևանի քաղաքապետը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ։

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը Երևանի քաղաքապետը։ Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարարում է Կազմակերպության գործունեությունը և կամ պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

բ) Տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը Երևանի քաղաքապետը:

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին։

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից։

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար։

զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող

որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չեն կարող ենթարկվել պատասխանատվության։

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը ե դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

ժ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ։

3.6 Կազմակերպության ուսումնադաստիրակչակլուսն աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ։

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից։

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը։

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը։

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով։

4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում եմ Հիմնադրի սեփականությունը:

4.7 Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

4.8 Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9 Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն է հանդիսանում ՀՀ պետական և Երևանի բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կողմից մշակութային գործունեությանը տրամադրած դրամաշնորհներից:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10 Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.11 Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

6.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

Հավելված 5

Երևան քաղաքի ավագանու

2013 թվականի ապրիլի 5-ի

N----Ա որոշման

Կազմված է «---» ---------- 2013թ.

և բաղկացած է «8» էջից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» ապրիլի 2013թ. N-----Ա ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

_____

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՆՈՐ ՆՈՐՔԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ 11.02.2005թ.

«----» ---------- 2013թ.

Գրանցման թիվ 28221005151

Վկայական 03Ա 067083 ՀՎՀՀ 00805112

11.02.2005թ. գրանցված կանոնադրության

թիվ փոփոխությունը գրանցված է Հի իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի տարածքային բաժնի կողմից

«----» ---------- 2013թ.

տարածքային բաժին _____

«ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Ս. ԱՍԼԱՄԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 <<Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Երևանի Նոր Նորք համայնքի ավագանու 23.10.2004թ. հ.56 որոշմամբ և հանդիսանում է <<Երևանի Նոր Նորք համայնքի Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը, գրանցված ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Խորհրդային տարածքային Ստորաբաժանման կողմից, գրանցման թիվ 28221005151, վկայական 03Ա067083, 11.02.2005թ.: Կազմակերպությունը ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Կրթության մասին>> ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3 Կազմակերպության հիմնադիրը Երևան համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Երևանի ավագանու (այսուհետ՝ Հիմնադիր), իսկ հիմնադրի կողմից, որպես համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված համայնքային մարմին հանդիսանում է Երևանի քաղաքապետը:

1.4 Կազմակերպությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն Հիմնադրի որոշմամբ:

1.6 Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

1.7 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով իր անվամբ կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր:

1.8 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

1.9 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ Կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

1.10 Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ <<Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Ս.Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

ռուսերեն լրիվ՝ ‘’Музыкальная школа № 1 имени С. Асламазяна административного округа Нор Норк г. Еревана” общинная некоммерческая организация.

անգլերեն լրիվ՝ «Musical school № 1 after S. Aslamazyan administrative district Nor Norq of Yerevan» community non commercial organization

1.11 Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Քաղաք Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված, առաջին հատված, Գյուլիքեխվյան փողոց 6 շենք:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային և նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու համար: Կազմակերպությունն ուսումնական հաստատության տիպի երաժշտական դպրոց է:

2.2 Կազմակերպության գործունեության հիմնական նպատակներն են՝

ա) երաժշտական մասնագիտական կրթության իրականացում,

բ) արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,

գ) ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, օժտված և տաղանդավոր երեխաներին համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար նախապատրաստում,

դ) մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,

ե) բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի իրականացում,

2.3 Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) համերգային գործունեություն

բ) հրատարակչական գործունեություն:

Ձեռնակատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպությունը իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

2.4 Կազմակերպությունը հարկերը տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

2.5 Համայնքային կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, դրա լիազորված համայնքային մարմինը և Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը: Կազմակերպության լիազորված համայնքային մարմնի ղեկավարը, Կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

3.2 Կազմակերպության Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) Կազմակերպության հիմնադրումը,

բ) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների՝ այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

դ) Կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և կամ ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,

ե) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը,

զ) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,

3.3 Լիազորված համայնքային մարմինը (Երևանի քաղաքապետ)՝ իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Երևանի քաղաքապետը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացվում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

բ) իրականացնում է Կազմակերպության գործունեության վերահսկողությունը,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, Հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

ը) հաստատում է Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

թ) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով նախատեսված այլ գործառույթներ:

3.4 Կազմակերպության գործադիր մարմինը.

ա) Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված համայնքային մարմինը՝ Երևանի քաղաքապետը: Կազմակերպության տնօրենն օրենքով, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն՝ օրենքների, իրավական այլ ակտերի, Հիմնադրի կամ լիազորված համայնքային մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ) Տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր, որը Հիմնադրի անունից ստորագրում է լիազորված համայնքային մարմնի ղեկավարը՝ Երևանի քաղաքապետը:

գ) Կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը պետք է բավարարի օրենքով նախատեսված պահանջներին:

դ) Կազմակերպության տնօրենը պետք է ունենա մասնագիտական բարձրագույն կրթություն, չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

ե) Տնօրենի պաշտոնում նշանակված անձը գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը պատճառած վնասի համար:

զ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի, լիազորված համայնքային մարմնի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

3.5 Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ, Հիմնադրի ու լիազորված համայնքային մարմնի որոշումներով ու կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը՝ այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ ու նշանակում կարգապահական տույժեր,

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

զ) կատարում աշխատանքի բաշխում տեղակալների միջև,

է) սահմանում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

թ) ապահովում է Կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում լիազորված համայնքային մարմին,

ժ) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3.6 Կազմակերպության ուսումնադաստիրակչական աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ, մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

4.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

4.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

4.3 Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը:

4.4 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

4.6 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը Համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ Հիմնադրի կամ Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ Հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հանդիսանում են Հիմնադրի սեփականությունը:

4.7Հիմնադրի կողմից գույքը Կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարացնելու կամ փոփոխելու համար:

4.8Հիմնադրի կողմից Կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

4.9Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրն են հանդիսանում աշակերտների ուսման վարձից գոյացած գումարները, ՀՀ պետական և համայնքային բյուջեներից հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցները, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումները և հանգանակությունները, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհները:

Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են Կազմակերպության եկամուտների մեջ և կազմում նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդ:

4.10Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

4.11Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կողմից:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.2 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

6.1 Համայնքային Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

6.2 Համայնքային Կազմակերպությունը լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, մնացած գույքն ուղղվում է Երևանի բյուջե:

6.3 Համայնքային Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: